ԱՐԱՐԱՏ

ԱԳՈՒԱՆԱՑԻ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ.

ԹԻՒ Գ. — ՀՐԱՏԱՆ Ե. **1872** ՏԱՐԻ Գ. — ՄԱՐՏ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊՏՈՒՂ ՅԱՆԿԱԼԻ

ՈՐ Է

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՍՈՒՐԲ ԵՍ ՏԷՐ»

ՀԱՐՑԻՆ.

(Շ-ր-ն-ա-կ-ա-ն.)

Պատասխանի որպէս յառաջագոյն ասացաք լինել յապականութենէ օդոց, ի ձեռն հրեշտակաց առ այն տրամադրեալ, այս ինքն առ ի լինել մահտարաժամ, որք ունին տրամադրել առ ընկալնուլ, յընդունել զօդս, ձգեն յանձինս զհիմն ցաւոց, ուստի ըստ մարմնոյ խոյս տալ և առանձնանալ յապահով տեղիս, և յօդամաքուր վայրս առ ի աղատ լինիլ յապականութենէ նորին՝ մարթ է յայնպիսի ժամանակի, որպէս և Կուռնել. ասէ ի Մեկ. Եղից Թ. 3. «Դեղ ժանտամահութեան առնշանադրեն զփախուստն յապականեալ օդոյ, զբօսանս և զենդութիւնս, զհաստատ կերակուր, և զըմպելի զօրացուցիչ սրտի և ոգւոյ, զգուշանալ ի կերակրոց՝ որք դիւրապէս ապականին և նեխին. ցանդ մաքրել զնեխեալ խոնաւութիւնն հալուէիւ (սապռ), զմռսաւ (ասլպէնտ), և քրքմաւ (զաֆրան), որպէս և թիրեաքաւ, զէտօարիւ, իլիմանիւ, շլորաւ ծառի (սալորի), յաճախ փոխել զհանդերձս, և զյատակս զգենուլ, զբերանն և զձեռն ցանդ լուանալ քացախով, ևս և երբեմն հզօր գինեաւ»։

Երկրորդ՝ ասացաք լինել ի ցասմանէ հրամանի Աստուծոյ. ապա ամենայնի պարտ է յդգուշութեան վայրի զԱստուած ընդ ինքեանց հաշտեցուցանել պատարագօք և խոնարհութեամբ՝ որպէս Դաւիթ. Բ. Թագ. Ի Դ. 17. աղօթիւք և պաղատանօք որպէս Եզեկիա, Եսայ. Լ.Ը. 10. ապա թէ ոչ վայրապար է զգուշութիւնն առանց հաշտեցուցման Աստուծոյ ընդ ինքեանց,

և առաւել շարժիչ կամացն Աստուծոյ ի բարկութիւն. և այնպիսիս արդարև տեսանի ասել, Աստուած՝ լերանց է Աստուած, և ոչ դաշտաց, զոր ցնորէին անուղղայքն. ըստ այսմ և մարգարէն յորդորէ, ''փախիր աղօթիւք և աստուածպաշտութեամբ առ Աստուած. և թաքիր այս ինքն զգոյշ կաց առ ժամանակ մի՝ այս ինքքն արտաքին աշխարանօք և՝ որք են պահեցողութիւն, քուրձ զգենուլ, լալ զարբեալն, մինչև անցցէ պատիժ բարկութեան Տեառն այս ինքն մինչև հաշտեցուսցես ընդ քեզ Տէր, և անցցէ զքև ցասումն նորա. որ օրինակ երևի Եղեից ԺՐ. ուր ասէ Տէր ցԻսրայէլացիս. ''Բայց դուք մի՛ ելանիցէք իւրաքանչիւր ընդ դուռն տան իւրոյ մինչև ցառաւօտ, զի անցցէ Տէր հարկանել զԵգիպտացիս ,,. ուր ասէ մեծն Պարգան, ''Տեառն հրաման անցանէր հրեշտակիւ. ընդ ամենայն Եգիպտոս, և զանդրանիկսն հարկանէր ,,: Ըստ այսմ խօսի և մեկնիչ ոմն յասելն ''Ի պատուհասել Աստուծոյ զանզգամն ի քաղաքի ուրեք՝ արժան է ժողովրդեան Տեառն խոյս տալ և առանձնանալ յապահով տեղւոջ և պահել զդրունս, և կամ՝ փախչիլ և թագչիլ ուրեք մինչև անցցէ պատիժ բարկութեան Տեառն ,,: Եւ այն զոր Դաւիթ ասէ՝ ոչ զգուշութենէս ասէ՝ որ գովելի է և ոչ խոտելի, այլ զներկայութենէ Աստուծոյ է ասէ, որ ամենայն ինչ մերկապարանոց է առաջի Աստուծոյ, զի ասէ փախեայց, և յաղօթս կալն բոլորով սրտիւ մերձենալ է առ նա, և ոչ փախուստ. զի փախչելն է յԱստուծոյ՝ զկամս նորա ոչ առնել՝ և միշտ ի մեղս թաւալիլ, որք օտար են ի բանից մերոց։

Ասիցես երկրորդ. Աստուած՝ իւր է ներգործութիւն՝ իւր իմացումն՝ իւր կամեցումն, և ոչինչ ներգործութիւն նորոգ յառաջ ածէ, կամ ընդունի, յորժամ որոշէ զեր իմն ազատօրէն. վասն այսորիկ ոչ լինի ի նմա փոփոխումն. ապա կամքն Աստուծոյ է անփոփոխելի. և զի ի կամաց նորա գայ հասանի պատիժն, պարտ է զի անփոփոխապէս կատարեսցի. ուրեմն հետևի թէ ի զուր ուղղեմք զաղօթս առ Աստուած։ Պատասխանի։ Ո՛չ իրև առ մարդս ուղղեմք զաղօթս (առ Աստուած), զորոյ կամս ի մերս ձգել ակնկալեմք, որպէս զի կամեսցի զայն զոր յառաջն ոչ կամէր. և զի փոխեսցէ զԵսորհուրդս եթէ հակառակ ինչ ունէր ի մտի զմէնջ, այլ զԱստուած աղերսեմք, զի դարձուսցէ զկամս մեր առ ինքն՝ որ ուղիղն է ամենայն բարեաց սկիզբն, և յայնժամ անշուշտ հաւատ ընծայեմք լսելի լինել աղօթից մերոց, յորժամ փոխարկին կամք մեր յԱստուածայինն, որպէս ասէ Սողոմոնիւ. Առակ. Ը. 17. ''Եւ որ զիսն սիրեն, սիրեմ. և որ զիսն խնդրեն՝ գտցեն ,,. ուր ասէ սուրբն Ներսէս Լամբ. ի Մեկն. Առակ. անդ. '' Ոչ ասէ թէ ես սիրեմ, և այնպէս զսիրելիսն յիս ձգեմ, և կամ՝ երևիմ ոչ խնդրողացն, այլ թէ՝ որ զիս նախ սիրեն, ապա սիրեմ զնա. զի թէ ոչ սիրողացն երևէր, և բռնի առ ինքն ձգէր, անձնիշխան կամքս ի մեզ անգործ մնայր. այլ ըստ կարգի՝ այս է, նախ մեզ զինքն սիրել, և ապա ինքն զմեզ սիրել. զի նախ Աբրահամ հաւատաց յԱստուած, և ապա համարեցաւ նմա յարդարութիւն, և կոչեցաւ բարեկամ Աստուծոյ. և նախ որդիքն Իսրայէլի աղաղակեցին, և ապա Աստուած լուաւ նոցա. և Պրիստոս ա-

սաց «Խնդրեցէք, և ապա տացի ձեզ. հայցեցէք՝ և ապա գտջիք ,,. և դարձեալ եթէ կայցէք դուք յիս սիրով, ապա և ես կացից ի ձեզ նովին սիրովն. և զոր ինչ խնդրիցէք արարից ,,: Արդ՝ զոր այս այսպէս է, և հնար է Աստուծոյ մարդոյ երևել, առանց մերոյ խնդրոյ. վասն այսր հարկ է որոց ի մարդկանէ վարժողքն են և ուսուցիչք, քարոզել ազիտաց զսէր նորին, և ձգել հաւանական բանիւ զմարդիկ առ Աստուած. ըստ որում ասէր առաքեալն, «Խօսեցայ ընդ ձեզ իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի ,,: Եւ դարձեալ «Զ՝ասն Քրիստոսի պատգամաւորիմք, որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մեք ,,. արդ այս այսպէս է, որ սիրէ զնա՝ փոխարէն ընդունի զսէր նորա. մինչ աղաղակել «Ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել շահ,,. և «որ խնդրէ՝ գտանէ ճանապարհ և դուռն և առհաւատչեայն երկնից Երքայութեանն ,,: Եւ դարձեալ մեկնելով զբանն «ի Տեառնէ պատրաստին կամք իմ,, ասէ մեկնիչն Առակ. Ը. 35. «Կամք որ յիս ձգին՝ ի Տեառնէ պատրաստին ,, այս ինքն յԱստուծոյ ի Հօրէ, որպէս ասաց Քրիստոս, «Ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ Հայրն իմ երկնաւոր ձգեսցէ զնա ,,. արդ, ասէ, անհնար է ումեք հպել յայս իմաստութիւն՝ եթէ ոչ յԱստուծոյ զօրանայցէ. բայց նախ ինքն զկամս տայ, և ապա Հոգին սուրբ պատրաստէ զնոյնս. և յարդարէ առ վերին հայեցողութեանն իմաստս. ըստ այսմ աղօթիւք և հայցմամբք դառնալն առ Տէր՝ զշնորհս պատրաստութեան կամաց ստանայ, և շնորհօք զշնորհս. վասն որոյ հաշտակամբ հայելով նմա Աստուած, ասէ առ հրեշտակն «Շատ է այդ, ամփոփեա զձեռքն քո ,,: Եւ արդ՝ ասելոցն «ի ցասմանէ քում հրամանի ,,՝ որպէս թէ ասէր՝ դու որ անփոփոխելի բնութիւնդ ես, նոյն գոլով յամենայն յաւիտեանս, անայլայլելի ցասմամբ, հարկանես զկամս մեր՝ զանազան պատժոց առաքմամբ, որով կամիս զի ուղղեսցին կամք մեր ի կամս քո. և յուղղելն՝ լսես աղօթից և աղաչանաց մերոց. ապա աղաչեմք և պաղատանօք հայցեմք ի մարդասիրութենէ կամաց քոց. խնայեա՛ քոյոց հաւատացելոց և պաշտօնէից կամաց քոց, որք ի ձեռն խրատուդ դարձուցին զկամս իւրեանց ի պատուիրանս քո, զորս աւանդեցեր Եկեղեցւոյ սրբոյ քո. վասն որոյ ապա յարէ քաղցրաբանելով և ասէ, «Բարձ ի մէնջ բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակոբայ ,,: Ի կատարիլ հետևեալ կամացն Աստուծոյ՝ անյապաղ լսէ բանից աղաչանաց մերոց, զի վասն այն խրատեաց զմեզ՝ զի դարձուցուք զկամս մեր առ նա. և ի դարձուցանելն խնդրեմք զբարձումն պատժոց. ըստ այսմ խնդրէ և սա ասելով «բարձ ,,. ոչ լինի բարձումն պատժոց, եթէ ոչ նախ կասեսցի հրաման նորա. և կասիլ հրամանին ոչ լինի՝ եթէ ոչ ի կատարիլն հետևորդ կամաց նորա. զի կամք Աստուծոյ ըստ մեր դիտման, յերկուս նկատի, ի հետևեալն՝ և ի նախընթացն. նախընթաց կամօք կամի Աստուած՝ զի ամենայն մարդ կեցցէ և իգիտութիւն ճշմարտութեան եկեսցէ. ըստ այնմ Մատ. ԻԳ. «Բանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, և ոչ կամեցայք,,: Իսկ հետևեալ կամօք չկամի զանարգութիւն արդարոցն, ըստ որում արդար, և է այնպիսի ըստ առաքելոյն «Կամաց

նորա ոչ ոք կայ հակառակ ,,. Հռով. Թ. վասն այսորիկ ասացաք ըստ հետևեալ կամայ կատարմանն, կասի և հրամանն, ուստի և վերանայ պատուհասն. վասն այսորիկ ասաց ''ի մէնջ ,,. քանզի նախընթաց կամքք կամեցաւ Աստուած, զի դարձցին ամենեքեան և կեցցեն. բայց ոչ կամեցան, և ի բերան սրոյ պատուհասի մեռան. և կամեցողքն հաւանեցան, և դարձան առ Տէր ըստ հետևեալ կամացն Աստուծոյ. վասն որոյ խոնարհական հայցուածովք աղերսեն բառնալ յինքեանց զհրաման սատակմանն՝ զի դարձան առ նա. ըստ այսմ իբրև քաղցրաուղղ խօսնակ գեղեցիկ կարգեաց երգելով թէ ''ի մէնջ ,,՝ այս ինքն ի հաւատացելոցս, զի ճշգրիտ եղանակ կատարելոյ զկամս Աստուծոյ՝ միայն ի քրիստոնէից ճշմարտապէս ճանաչի և կատարի, և ոչ յանհաւատից, զի նոքա ոչ կամին լսել ձայնի կամաց նորա և առնել, թէպէտ առնել գիտեն, բայց և նոցա առնէ Աստուած ողորմութիւն վասն հաւատացելոց՝ յայսմ աշխարհի. իսկ ի հանդերձեալն ըստ իւրաքանչիւրոց պահի հատուցումն. ըստ այսմ և Աբրահամու ասաց, ''Եթէ իցեն յիսուն արդարք՝ ոչ կորուսից վասն յիսնիցն ,,. իսկ վասն մեղաց Սոդոմացւոց բարձաւ ի նոցանէ զՊ. ովտ; Եւ երբեմն հասարակօրէն ըմպեն զբաժակ Տեառն արդարք և մեղաւորք. այսպէս և զբաժակ պատուհասի ի միասին ըմպեն. իսկ իւրաքանչիւրոցն պատիւ և պատուհաս ի հանդերձեալն պահի. ըստ սմին և ի զիրս 'Նմանութեանց՝ բարձրեալն անարժանից վասն օգտութեան այլոց ասի. քանզի անձրևական վերարկուն՝ ոչ վասն այն արկանի ասէ ի վերայ այլոց զդեստուց՝ զի աղնուագին է, այլ զի նա միայն աղտեղասցի և պահեսցէ զայլ զդեստս ,,. երես 956. սոյնպէս և զայլ օրինակս յառաջ ածէ անդանօր, և սոքօք յայտնի երևի՝ զի երբեմն անարժանից առնէ Աստուած ողորմութիւն ի պատիւ երեսաց կամարարաց իւրոց, և յօգուտ նոցա. վասն այսորիկ նախ ի հաւատացելոց հայցէ զբարձումն պատուհասի, ընդ որով ապա լռելեայն յամենեցունց, ըստ որոյ ասէ ''բարձ ի մէնջ,, այսինքն յաշխարհէս. բայց բարկացեալ Թագաւորն դիւրաւ ոչ ընդունի զաղաչանս՝ այլ միայն զսիրելեացն. որոյ պատճառն է՝ զի սիրելին իբրև զինքն ի պատիւ կամ յանարգանս է. ուստի զառաջինն զկամս նորա կատարէ, և ձայնի նորա լսէ. վասն այսորիկ ի ձեռին առեալ զբարեխօսելն սիրելոյն Աստուծոյ սրբոյն Յակոբայ, զի դիւրաւ լուիցէ մաղթանաց ձայնի, վասն որոյ յարակցէ ասելով, ''բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակոբայ ,,։ Աղօթք սրբոց՝ որ վասն հաւատացելոց՝ յայտնապէս ետես սրբազան Աւետարանիչն Յովհաննէս ի Յայտնութեան իւրում. Ե. 8. ''Օ՛ի քսան և չորք երիցունք ունէին իւրաքանչիւր որ քնար, և բուրվառ ոսկի լի խնկով՝ որ է աղօթք սրբոցն ,,, զորմէ ասէ Կուռնելիոս ի Գ. Յայտ. անդ. առնշանադրելի է աստ ընդ դէմ Վ՛իճիլանցիոսի և այլոց, թէ սուրբքն վասն մեր զաղօթս առ Տէր մատուցանեն, մանաւանդ հրեշտակքն, ևս առաւել առաքեալք և առաջնորդք, որպիսիք էին քսան և չորս երիցունք. որք ամենեքեան վասն ստորադրելոց աղօթեն առ Աստուած, և զհարկաւորութիւն նոցա հայցեն հանապազ։ Եւ դարձեալ ասէ ի նոյն գլուխ Ը. 3. ''Սուրբ-

քըն են որք զաղօթս Աստուծոյ մատուցանեն վասն հաւատացելոց ,,։ Բայց աստանօր ըստ ազգ առնելոյն Կուռնելեայ, ի մէջ բերեն հերետիկոսք զբան մարգարէին Եզեկիէլի՝ թէ ‘‘ Ասէ Աստուած՝ եթէ իցեն արքն այնոքիկ ի միջի նոցա, Նոյ, Յոբ, և Դանիէլ , նոքա արդարութեամբ իւրեանց ապրեսցին՝ ասէ Աղոնայի Տէր ,,։ Ապա ուրեմն ի ժամու բարկութեան Տեառն՝ ոչ է օգուտ ի նոցանէ։ Առ այս պատասխանէ Կուռնելիոս. ‘‘ Աստուած, ասէ, ոչ ասէ ասա զի մի՛ զսուրբս աղաչեսցեն՝ որպէս կարծեն, այլ զինքեանէ ոչ է լսելոց, ոչ թէ զնոսա ոչ սիրէ, կամ ոչ լսէ, այլ զի այնքան է ամբարշտութիւնն և յամառումն ՝ի բեռատանի, զի զնա ամենեին Աղաղեացովք ասպատակել վճռեալ է. և ոչինչ աղաչանաց լսել կամի զի ներեսցէ, զի որպէս ասացաք ի վերոյ, հետևեալ կամքն Աստուծոյ ոչ յետս դառնայ մինչև կատարեսցի. ապա թէ ոչ , ասէ, յայտ է Դանիէլի՝ թ. 1. ապաշխարանօք ՝ի բեէոյ զաղատութիւն ի գերութենէն. Յոբայ՝ ԽԹ. 8. զթողութիւն բարեկամաց իւրոց. Նոյի՝ զի մի՛ այլևս մարդիկ ջրհեղեղաւ կորիցեն. ապա մարթ է աղաչել զսուրբս ի ժամու պատժոց դարձուցանելով զկամս առ Աստուած, և օգուտ ի նեղութեան անբաւ տեսանեմք հասեալ ի նոցանէ։ Ըստ սմին ասէ և Պանական վարդապետն. ԻԹեկ. Յոբայ, ԽԹ. ի վերայ բանին Յոբայ՝ զորմ ասաց Աստուած առ բարեկամս նորա թէ՝ ‘‘ Յոբ ծառայ իմ արասցէ աղօթս վասն ձեր. հաշտն ասէ և բարեկամն յորժամ կամի ումեք ողորմել, նիւթ և առաջնորդ առնու զարդարան, որպէս Աբրահամ Աբիմելիքայ. և զՄովսէս և զԱհարօն ժողովրդեան. և զԵղիա անձրևին . . . . բայց դու տես, ասէ, զի ոչ կարեն օգնել պատարագքն, այլ մատուցողք պատարագին. վասն որոյ ասէ նախ՝ թէ ‘‘ զաղօթս արասցէ ,,. այսպէս վայել է և յաղագս Աբելի. հաճեցաւ ասէ նախ Աբէլ, և ապա ի պատարագս նորա. զոյն զայս վկայելով և սա ինքն երանելի ՝այրապետս՝ էառ ի ձեռին զսուրբ այրս Աստուծոյ զնա ինքն զսուրբն Յակոբ բարեխօս և միջնորդ լինել մաղթէ երգելով առ Աստուած ‘‘ բարեխօսութեամբ և աղօթիւք ,,. բանք և խօսք սրբոցն՝ որպէս ասացաք՝ առ Աստուած՝ իմանալիք են և հոգեղէնք ըստ օրինակի հրեշտակաց, բայց զանազանք ըստ շարժման կամացն (Աստուծոյ) իւրեանց, ընդ որս հաճեալ Աստուած առաքէ զողորմութիւն իւր յաշխարհ։ Եւ զի յատկապէս վասն բարձման մահտարաժամու է միջնորդ և բարեխօս փառաւորեալն և երջանիկն ի սուրբս հրաշալի հայրապետն տանս ՝այոց սուրբն Յակոբ, վասն այսորիկ զսա առնու միջնորդ ի ձեռին ասելով ‘‘ սրբոյն Յակոբայ ,,. միացեալն սրբութեամբ ի լոյսն գերամաքուր, և սիւնն լուսոյ սրբութեան, կանգնեալն Յեկեղեցիս, լուսածագ շառաւիղ ՝օրն մերոյ սրբոյն Գրիգորի հոգւոց լուսատուին, և ընտանին ընդ նմա յերկինս և յերկրի, որ յանմարդաբնակ յանապատին հիացոյց զիմանալի բնութիւնս հրաշալի ճգնութեամբն, ընդ նմին և զաղդ մարդկան. օրինակ, հրաշիւք ապշեցուցեալ զարմացոյց՝ զանդամալոյծս գնացուցանելով, զմեռեալս յարուցանելով, զախտս և զհարուածս բառնալով, անդարձ մաղթանօք իւրովք. որոյ սքանչելի համբաւ ոչ միայն յաղգս քրիստոնէից

տարածեալ, այլ և անհաւատից անգամ քարոզեալ և հռչակեալ. որովք ոչ սակաւս անհաւատից էած յուղիղ յարքունի պողոտայն զդաստացեալ գլխովին, ոչ միայն յառաքինակատար կեանս անցաւոր, այլ և զկնի տիրակոչ վախճանին բարձմամբ զբժընդակ ախտից՝ հարուածոց և քսամնափուշ հիւանդութեանց, և պէսպէս սարսռելի ախտաժէտութեանց ջերմ սիրով ամենակալին՝ և սրախս ջերմեռանդութեամբ, ի բարեխօսութիւն իւր դիմել ապաստանելոց, որ և մինչև ցայսօր զհիանալիս գործէ գործս՝ անհետադարձ մաղթանօքն՝ որ առ Տէր. յոյր վասն և սա ինքն եօթնաջահեան լուսոյն ընդունակ այրս ըստ սրտին Աստուծոյ սուրբն Ներսէս Շնորհալին՝ զբաղմերախտ հայրապետիս սրբոյն Յակոբայ զբարեխօսութիւնն յուշ առնէ յարաժամ, յորդորելով զամենեսեան զմեղսամած ոգիքս նորա ապաստանիլ յանդարձ մաղթանս նորին, և միջնորդ առ Տէր ունիլ ի ձեռին ի բազմաձուփ խռովութեանցս վայրի, յորում ազգի ազգի քըսամընելի ախտք և հիւանդութիւնք վասն մեղաց մերոց զօրացեալք առ մեզ հասանին. ուստի որպէս մեղք քաղցր ի բերան սրբոյ հայրապետիս ձայնէ նուագելով ''բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակոբայ,,: Բարեխօսութիւն սրբոցս ոչ նըպաստէ մեզ ի մահտարաժամ և ևթ աղատիլ, այլ յամենայն ցաւոց և ի պատուհասից, և յանփոփոխ ցասմանէ Աստուծոյ և ըստ արդար իրաւանց առ հէքս արագ հասելոյ, ի դիւական լկմանէ, ի յընդարբոյս վշտաց, ի ձախողակի ներողութեանց, ի բազմազան փորձութեանց, որք ի յանցանաց մերոց զօրացեալք զմեզ թեւակոխեն. վասն որոյ ոչ ոք է յաստուածասէր արանց՝ որ հայցէ անտի օգնութիւն ջերմ հոգւով և անթերի հաւատով, և ոչ առնուցու յինչ և իցէ ներողութեան. սակայն բովանդակապէս խօսելով, առաւել պահպան գոլով սրբոյս աղատել զվշտագնեալս ի ժանտախտէ և տիրահաճոյ մաղթանօք բառնալ յերկրէ զախտն գլխովին՝ տիրապէս մարթ է այսպիսի դառնաղէտ ժամու և ժամանակի ի մշտափայլ բարեխօսութիւն նորին դիմել, որով փայլի ի պարս սրբոց առաւել արդեամբք հրաշից առ ախտաժէտ անձինս, և խնդրել ի նմանէ զերազահասն օգնութիւն, առնելով յանուն նորա զպատուս առաքինական արդեանց՝ զողորմութեանց ասեմ և զաղօթից, որ և նա շարժեալ ի գութ հայրական ըստ առաքինական գործոց և վաստակոց որ յանուն իւր՝ հատուցէ կրկնապատիկ բարիս միջնորդութեան և բարեխօսութեան իւրոյ՝ ի դէպ ժամու օգնականութեան: Զի արդ զտեալ զմիջնորդ հաշտութեան դարձուցանէ զերդս բանից իւրոց ի հայցուածս օգնութեան, ի ներող լսողութենէ նորին առ վաղ ընկալնոյ՝ ասելով:

(Շարունակելի:)

ԴԱՍԱՍԱՑՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ.

(Շարունակութիւն:)

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՄԸ.

Աստուածաշնչի ուսումը պէտք է ուսուցանուի աշակերտին այն ժամանակից իսկ, երբ նա մանուում է ուսումնարան, Աստուածաշնչի պատմութիւնները պատմելով